



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«22» հունիսի 2020թ.

N4

ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

**Հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի մասով
ԱԱՀ գումարների վերաձևակերպման վերաբերյալ**

Հարց

ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունը մինչ 2018թ. հոկտեմբերի 30-ը համարվել է շրջանառության հարկ վճարող, 2018թ. նոյեմբերի 1-ից հարկման հատուկ համակարգից անցում է կատարվել հարկման ընդհանուր համակարգի: Մինչև հարկման ընդհանուր համակարգին անցնելը կազմակերպությունը ձեռք է բերել հիմնական միջոցներ, որոնց մասով հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ն միացվել է ինքնարժեքին, իսկ հարկման ընդհանուր համակարգին անցնելուց հետո այդ հիմնական միջոցները վերագրվել են միայն ԱԱՀ-ով հարկվող գործարքներին: Արդյո՞ք վերը նշված կազմակերպության վրա տարածվում են 73-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի դրույթները և կազմակերպությունը կարող է հարկման ընդհանուր համակարգին անցում կատարելուց հետո ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով ԱԱՀ-ի հաշվանցվող (պակասեցվող) գումարների ավելացում կատարել, այն դեպքում եթե կազմակերպությունը մինչ 2018թ. նոյեմբերի մեկը ԱԱՀ-ի հաշվանցվող (պակասեցվող) գումարների նվազեցում չի կատարել, քանի որ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկ չի ներկայացրել:

Պատասխան

ՀՀ հարկային օրենսգրքի 73-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ եթե ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը (այդ թվում՝ հիմնական միջոցի կառուցումը), աշխատանքի ընդունումը կամ ծառայության ստացումը (ձեռքբերումներ) ուղղակիորեն վերագրվում են ԱԱՀ-ի 20 կամ 0 տոկոս դրույքաչափով հարկման ենթակա գործարքներին (ԱԱՀ-ով հարկվող գործարքներ) կամ հնարավոր չէ ուղղակիորեն վերագրել ԱԱՀ-ով հարկվող կամ օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով սահմանված գործարքներին (ԱԱՀ-ով չհարկվող գործարքներ), ապա այդ ձեռքբերումների գծով ԱԱՀ-ի գումարների հաշվանցումը (պակասեցումը) օրենսգրքով սահմանված կարգով կատարվում է ձեռքբերումների կատարման հաշվետու ժամանակաշրջանում,

- 3-րդ մասի համաձայն՝ եթե ձեռքբերումներն ուղղակիորեն վերագրվում են ԱԱՀ-ով չհարկվող գործարքներին, ապա այդ ձեռքբերումների գծով ԱԱՀ-ի գումարները հաշվանցման (պակասեցման) ենթակա չեն ձեռքբերումների կատարման հաշվետու ժամանակաշրջանում,

- 4-րդ մասով սահմանված են ապրանքի (այդ թվում՝ հիմնական միջոցի համար առանձին), աշխատանքի կամ ծառայության մասով չհաշվանցված (չպակասեցված) ԱԱՀ-ի գումարների վերաձևակերպման կարգավորումները, երբ ձեռքբերումները, որոնց մասով նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում օրենսգրքով սահմանված կարգով կատարվել է ԱԱՀ-ի հաշվանցվող (պակասեցվող) գումարների նվազեցում (ԱԱՀ-ի գումարները օրենսգրքի 6-րդ բաժնով սահմանված կարգով միացվել են ձեռքբերումների արժեքին), հետագա հաշվետու ժամանակաշրջաններում ամբողջությամբ կամ մասնակիորեն վերագրվում են ԱԱՀ-ով հարկվող գործարքներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ հարկման հատուկ համակարգերից հարկման ընդհանուր համակարգ անցնելու դեպքում ձեռքբերումների մասով չհաշվանցված (չպակասեցված) ԱԱՀ-ի գումարների վերաձևակերպումների մասով կիրառելի են օրենսգրքի 73-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգավորումները:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ